ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱՐՑԸ 1918—1920 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Վ. Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

1918—1920 թվականները արցախահայության պատմության ծանր ժամանակաշրջաններից էին։ Այդ տարիներին էր, որ մուսավաթականները հին հայկական այս աշխարհը դարձրին տարածքային վեճերի առարկա։ Նորերս իշխանության ելած դարձած մուսավաթականները, չունենալով պատմամշակութային լուրջ ժառանգություն և քաղաքական վարվելակերպի անհրաժեշտ փորձ, բայց փոխարենը զինված լինելով պանթուրքական հավատքի նացիոնալիզմի գաղափարներով, հավակնում էին թուրքական սպանների օգնությամբ գրավել Ղարաբաղը, Նախիջևանը և Զանգեզուրը։ Պատմական-կան որևէ հիմքից զուրկ նրանց այդ հավակնությունները դարձան տարածքային վեճերի և ազգամիջյան մշտական բախումների պատճառ։

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և նրա առաջատար ուժը հանդիսացող դաշնակցական կուսակցությունը, ի տարբերություն ՀՀՇ-ական իշխանությունների, այդ տարիներին Ղարաբաղյան հարցում ունեին պարզ ու հստակ դիրքորոշում, այն է՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանի անբաժան մասն է, այն չպիտի մանի Ադրբեջանի կազմի մեջ, իսկ նրա քաղաքական ճակատագրի սերն ու տնօրենը միայն ու միայն նրա տեղաբնիկ ժողովուրդն է, այսինքն՝ արցախահայությունը։

Այս աղերսով կատարենք մի փոքր շեղում և ուշադրություն դարձնենք մի կարևոր հարցի վրա։ 1918 թ. Հայաստանի կառավարությունը գրեթե ոչինչ չէր օգտագործել հնից, և նրա վիճակը ամեն առումով անհամատեղելի էր ՀՀՇ-ական իշխանությունների վիճակի հետ, իշխանություններ, որոնք նախորդներից ստացան ժամանակակից տեխնիկայով զինված հզոր արդյունաբերություն և գյուղատնտեսություն, գիտամշակութային հարյուրավոր հաստատություններ, կրթական և բուժական լայն ցանց, մի խոսքով՝ տրնտեսամշակութային հզոր պոտենցիալ՝ բարեկարգ քաղաքներով և գյուղերով հանդերձ։ Ցցուն տարբերություն կա նաև Հայաստանի այսօրյա և ներկա ռազմաքաղաքական դրության միջև։ Այն ժամանակ թուրքական արշավանք, հարյուր հազարավոր մերկ ու բոկոտն գաղթականներ, հեղափոխության հաղթական ծրագրով հյուսիսից առաջ շարժվող գաղափարական այլ դավանանքի ուժեր։ Այսօրվա արտաքուստ նման որոշ երևույթներ ըստ էության նույնական չեն, իսկ հյուսիսից ոչ միայն վտանգ և սպառնալիք չկա, այլև Ռուսաստանի հետ առկա են գաղափարական և քաղաքական ընդհանրություններ։

Պարագաների և դրության հիշյալ տարբերությունները, որոնք բնորոշում են դաշնակցական և ՀՀՇ-ական կառավարությունների հնարավորությունները, մատնանշում են այն իրողությունը, որ զրկված լինելով 1990-ական թթ. հնարավորություններից, Հայաստանի կառավարությունը այդուհանդերձ այն ժամանակ ոչ մի զիջման չդիմեց ղարաբաղյան խնդրում։ Պատկերացնում եմ, եթե նշված առավելությունները և հնարավորությունները 1918—1920 թթ. կառավարողները ունենային։

Կանխավ զգում եմ ընդդիմախոսիս դիտողությունը, թե իբր չտեսնելու եմ տալիս այսօրվա դժվարությունները։ Բնավ ոչ և հազար անգամ ոչ։ Գիտեմ նաև, որ փոխվել են խնդիրները, իրադարձությունների և իրադրության թելադրանքը։ Բայց նորից պիտի կրկնեմ՝ հնարավորությունների և

դրանց վրա հենվելով ազգանպաստ ճիշտ քաղաքականություն վարելու առումով այն ժամանակվա կառավարության գործունեության պայմանները անհամեմատ ծանր էին, և հավասարության ղուդահեռ անցկացնելու ոչ մի եղր չի կարող լինել 1918—1920 թթ. և 1990-ական թթ. պայմանների միջև։ Առավել ևս ոչ մի արդարացում չի կարող ունենալ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի վարչակարգի ենթակայությանը թողնելու Լևոն Տեր-Պետրոսյանի և նրա շրջապատի դիրքորոշումը, որը հավասարազոր է հայկական այդ մարզը թուրքերին նվիրաբերելուն։

1918—1920 թթ. դարաբազյան հարցի շուրջ առաջացած իրադրության, բախումների և վեճերի, քաղաքական պայքարի պատմությունը, հենվելով պահպանված փաստաթղթերի վրա, պայմանականորեն կարելի է բաժանել երեք փուլի. ա) 1918 թ. մայիսից մինչև նույն թվականի հոկտեմբերի վերջ (Անդրկովկասում թուրքական արշավանքի ամիսներ), բ) 1918-ի նոյեմբերից մինչև 1920-ի մայիս (Անդրկովկասում դաշնակցական միսիաների և անգլիական զորքերի ներկայության ժամանակաշրջան) և գ) 1920 թ. մայիս—նոյեմբեր (Ադրբեջանի խորհրդայնացումից մինչև Հայաստանի խորհրդայնացում)։ Հայաստանի Հանրապետության և արցախահայության պայքարը Լեռնային Ղարաբաղի համար այդ փուլերից յուրաքանչյուրում ուներ իր յուրահատուկ կողմերը՝ պայմանավորված տվյալ ժամանակամիջոցում տիրող իրադարձությամբ։

Արդ, տեսնենք, թե ինչպիսին էր Հայաստանի կառավարության դիրքորոշումը ղարաբաղյան խնդրում։ Դիմենք պահպանված բազում փաստաթղթերից մի քանիսի օգնությանը։ Նախ նշենք, որ հանրապետության կառավարությունը իր քաղաքականությունը վարում էր՝ լիովին հաշվի առնելով արցախահայերի ինքնորոշման իրավունքը, իրավունք, որը օրինականացվել էր արցախահայության բոլոր տարբեր համաժողովների որոշումներում, որոնցում, որպես պարտադիր պայման, Լեռնային Ղարաբաղը համարվում էր Հայաստանի անբաժան մասը և մերժվում էր Ադրբեջանի վարչակարգին ենթարկվելու որևէ պահանջ՝ լայն ինքնավարության ինչ քողի տակ էլ որ այն մատուցվեր։ Ինչ վերաբերում է արցախահայության 7-րդ համագումարին, որը 1919 թ. օգոստոսի 22-ին, հայ բնակչության ոչնչացման վտանգին դեմ-հանդիման, համաձայնություն տվեց ճանաչելու Ադրբեջանի գլխավոր նահանգապետին, նրան առընթեր գործող և կառավարման իրավունքով օժտված հայկական խորհրդով հանդերձ, ապա դա, ինչպես նշված էր համաձայնագրի հենց 1-ին կետում, զուտ ժամանակավոր բնույթ ուներ՝ մինչև (Փարիզի) հաշտության կոնֆերանսում հարցի լուծումը[1]։ Դեպքերի հետագա զարգացումը, ինչպես որ պետք է սպասել, ի չիք դարձրեց այդ համաձայնագրի նույնիսկ ժամանակավոր իրագործումը, որովհետև ադրբեջանական կողմը շարունակ ոտնատրոր էր նրա պայմանները։

Դեռևս իշխանության գլուխ գալուց ամիսներ առաջ, 1918 թ. հունվարին, հայկական գինվորական խորհրդի գործադիր կոմիտեն, որը հիմնականում կազմված էր դաշնակցության ներկայացուցիչներից, քայլեր է անում Շուշվա հայկական դունդ ձևավորելու համար։ Ընդգծելով Ղարաբաղի «հատուկ նշանակությունը հայերի համար» և կանխագուշակելով դեպքերի հետագա զարգացումը, գործադիր կոմիտեի անդամ Տիգրանյանը հարց է բարձրացնում գնդի կազմման, այն անհրաժեշտ չափով զենք ու զինամթերքով ապահովելու մասին[2]։ Ավելի ուշ, նույն թվականի հուլիսին, Հնչակյան Հայաստանի պատվիրակությունը, իր տարածքային պահանջներում իստորվս կարևորելով Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի մարզերի ինքիրը, առաջարկում էր զերմանական կառավարությանը աղդելու իր դաշնակից

[1] Нагорный Карабах в 1918—1923 гг. Сборник документов и материалов. Ответ. редактор проф. В. А. Мнкаелян. Е., 1992 (далее: Нагорный Карабах).

[2] Նույն տեղում, էջ 1—3։

Թուրքիայի վրա՝ այդ տարածքներում թուրք-թաթարական վայրագություններին վերջ տալու և դրանք Հայաստանի կազմում պահելու համար։ 1918 թ. հոկտեմբերի 30-ին Ղարաբաղի առթիվ գերմանական արտգործնախարարությանը ներկայացրած հուշագրում պատվիրակության ղեկավար Համո Օհանջանյանը իրազեկում էր, որ թուրքերը պատրաստվում են Ադրբեջանից հետո քաշվելուց հետո այնտեղ թողնել թուրքական հինգերորդ և տասնհինգերորդ դիվիզիաները, որպեսզի նրանք, իբրև թաթարական (իմա ադրբեջանական) հանրապետության զինվորներ մասնակցեն հայ բնակչության, այն է՝ Ղարաբաղի հայության պլանավորված ոչնչացմանը։ «Արդեն այժմ Ղարաբաղից ստացված լուրերը արտակարգ անհանգստացնող են։ Թուրքական զորքերը առաջ են շարժվել Ասքերանի վրա և ոմրսկոծում են հայկական գյուղերը։ Պարզ է, որ թուրքերը այս մարդում ևս ուզում են ոչնչացնել հայ բնակչությանը։

Իմ կառավարությունը,—հայտնում էր այնուհետև Հ. Օհանջանյանը,—հանձնարարել է ինձ գերմանական կառավարության առաջ վճռականորեն բողոքել հայ բնակչության նկատմամբ թուրքական զորքերի և թաթարների կողմից իրականացվող անմարդկային վայրագությունների դեմ»[3]։

1919 թ. հունվարի 15-ին Կովկասում բրիտանական զորքերի հրամանատար գեներալ Թոմսոնի հավանությամբ հայտնի պանթուրքիստ, ազգությամբ քուրդ խոսրով բեկ Սուլթանովը նշանակվում է Ղարաբաղի գեներալ-նահանգապետ։ Ասորիճան-աբար հայերը հուսախաբվում են. նրանք բոլոր հիմքերը ունեին հույսեր կապելու իրենց դաշնակից Անտանտի հաղթանակի հետ, կարծելով, թե այդ հաղթանակը և Անդրկովկաս անգլիական զորքերի մուտքը քաղաքական արմատական փոփոխություններ կմտցնեն տարածաշրջանում ի վնաս մուսավաթականների՝ պարտություն կրած թուրքերի եղբայրների։ Սակայն Մուսավաթը շատ արագ լեզու գտավ անգլիական հրամանատարության հետ։ Մուսավաթական կառավարությունը հայտարարեց անգլիացիներին, թե միայն իրենք կարող են լինել նրանց հուսալի հենարանը ընդդեմ Ռուսաստանի։ ոչ միայն Անդրկովկասում, այլև նրա վրայով անգլիական քաղաքականությունը Պարսկաստանում, Թուրքեստանում (իմա Միջին Ասիայում) և Հնդկաստանում անցկացնելու համար, և չպետք է հույսեր կապել ռուսաստանի հայերի հետ։ Այս գործոնը, հավասարապես նաև երեկվա հակառակորդ Թուրքիային իր կողմը թեքելու քաղաքական հեռահար մտքումը նկատի առնելով՝ Թոմսոնը համաձայնեց թուրքական դրածո Սուլթանովի նշանակմանը, այն մարդու նշանակմանը, որը հետագայում, 1920—1940-ական թվականներին, Թուրքիայում ադրբեջանական վտարանդիների խմբակցության պարագլուխներից էր և ֆաշիստական Գերմանիայի հաղթանակի հետ էր կապում Կովկասում թուրքական նոր պետության ստեղծումը։ Անկարայում գերմանական հյուպատոսին 1942 թ. փետրվարի 23-ին ուղղված գաղտնի մի հաղորդագրության մեջ, որ պահվում է Գերմանիայի արտգործնախարարության քաղաքական արխիվում, Սուլթանովի խմբակցության մասին ասված է. «Այդ խմբի անդամները գոնեթե առանց բացառության մտնում էին մուսավաթական կառավարության մեջ։ Այդ շարժումը ձգտում է բոլոր արևելյան թյուրքերին միավորել մեկ միասնական դաշնակցային պետության մեջ, որը պետք է իր մեջ ներառներ Կովկասյան Ադրբեջանը, ընդգրկելով Դաղստանը, Իրանական Ադրբեջանը, Հայաստանը, Վրաստանը, Օսեթիան, Արխազիան և Աջարիան»[4]։ Այս խնդրում Սուլթանովը հանդիպում է իր վաղեմի բարեկամ Նուրի փաշայի դի-

---

[3] Армянский вопрос и Геноцид армян в Турции (1913—1919). Материалы политического архива МИД кайзеровской Германии. Сборник. Составитель и ответ. редактор. проф. Вардгес Микаелян. Е., 1995. с. 590—591. (Далее Армянский вопрос).

[4] Politisches Archiv des ausvarfigen Amts des kaiserlichen Deutschland" (Politarchiv). Konst. /Ankara, 479, 23. II. 1942.

մարդությանը, որպես նրա պանթուրքիստական գաղափարների իրականացման խոչընդոտ։ Այդ պատճառով էլ Նուրի փաշայի խորհրդով Սուլթանովին կանչում են Բեռլին ոչ անհայտ Շուլենբերգի մոտ՝ «դաստիարակման համար»։

Սա ի միջի այլոց։ Հայաստանի կառավարությունը վճռական բողոքի ձայն է բարձրացնում Ղարաբաղում ադրբեջանական գլխավոր նահանգապետություն մտցնելու և Սուլթանովի նշանակման դեմ։ Կառավարության՝ 1919 թ. փետրվարի պաշտոնական բողոքում ասված էր, որ Լեռնային Ղարաբաղում արդեն վաղուց կառավարում է հայկական վարչակարգը, և տեղի բնակչությունը զենքը ձեռքին պաշտպանում է իր անկախությունը Ադրբեջանից՝ իր տարածքը համարելով Հայաստանի անքակտելի մասը։ «Նույն տեսակետի վրա է կանգնած հայկական պառլամենտը,—ասված էր այնուհետև նոտայում։—Փաստորեն երկիրը կառավարում է տեղական խորհուրդը՝ Հայաստանի կառավարության անունից և հանձնարարությամբ, որը Գորիսում ունի իր կոմիսարը»[5]։

1919 թ. փետրվարի 28-ին դեղապետ Թոմսոնին Հայաստանի արտգործնախարարի հղած բողոքում ասված էր, որ «Հայաստանը սպասում է հաշտության կոնֆերանսի որոշմանը և հույս ունի, որ մինչև այդ որոշման ընդունումը կպահպանվի status quo-ն և անկասկած այն չի կարող միակողմանիորեն փոփոխվել ադրբեջանական կառավարության կողմից»[6]։

1919 թ. մարտի 25-ին Հայաստանի կառավարությունը Երևան ժամանած դեղապետ Թոմսոնին հայտարարեց, որ Լեռնային Ղարաբաղը որպես Հայաստանի անբաժան մաս պետք է կառավարվի տեղի հայ բնակչության կամքի համաձայն՝ Ազգային խորհրդի կողմից։ Միաժամանակ կառավարությունը անհամոզիչ գտավ Թոմսոնի այն պնդումը, որ իբր թե Սուլթանովի նշանակումը պայմանավորված է սոսկ փախստականներին պարենով ապահովելու մտահոգությամբ։

1919 թ. ապրիլի սկզբներին Հայաստանի կառավարությունը գեղեցդապետ Արզումանյանին նշանակում է Ղարաբաղի գործերի և կառավարման գծով բրիտանական հրամանատարության լիազորին առընթեր նեղկայացուցիչ։ Միաժամանակ կառավարությունը դիմում է Հայաստանում ամերիկյան հյուպատոսի միջնորդությանը՝ պահանջելով Լեռնային Ղարաբաղը չմտցնել ադրբեջանական գլխավոր նահանգապետության մեջ, այնտեղից հեռացնել թաթարական զորքերը, մարդի կառավարումը թողնել Ազգային խորհրդին։ Ապրիլի 30-ին կառավարությունը հուշագրով որպես հակամիջոց անգլիական զորքերի գլխավոր հրամանատարին առաջարկում է մինչև Փարիզի կոնֆերանսի որոշումը Լեռնային Ղարաբաղում հաստատել ոչ թե ադրբեջանական, այլ անգլիական գլխավոր նահանգապետություն, որը կառավարվում է Հայոց ազգային խորհրդի աջակցությամբ[7]։

Կառավարությունը այս և հետագա ամիսներին ուղիներ էր որոնում հարցի լուծումը գտնելու համար։ Ոչ մի փաստաթղթում սկզբունք չկա Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի վարչակարգի ենթակայությանը թողնելու մասին։ Տվյալ պահին կարևորը Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմում չմտցնելն էր, որը և հետապնդում էր կառավարությունը։

1919 թ. ապրիլի վերջերին կառավարությունը հատուկ հրահանգ է իջեցնում իր երկու նեղկայացուցիչներին՝ Արզումանյանին՝ Շուշում և Շահմազյանին՝ Գորիսում։ Հրահանգի 1-ին կետը, Լեռնային Ղարաբաղը համարելով Հայաստանի անբաժան մաս, կառավարության ներկայացուցիչներին իրազեկում էր, սակայն, որ մինչև Փարիզի հաշտության կոնֆերանսի որոշումը անհրաժեշտ է համարվում մարդի կառավարումը դեռևս ազգությամբ

---

5 Нагорный Карабах, с. 82.

6 Նույն տեղը, էջ 95։

7 Նույն տեղը, էջ 168։

անգլիացի, Անգլիայի գլխավոր նահանգապետի և հայերի ու մահմեդականների տեղային խորհուրդների վրա՝ առաջինը Հայկական Լեռնային Ղարաբաղում, երկրորդը՝ մահմեդական տարածքում (Ասքերանից արևելք)[8]։

1919 թ. մայիսի 7-ին Հայաստանի կառավարությունը հարկադրված էր հանդես գալ պաշտոնական հաղորդագրությամբ՝ ի լուր աշխարհի հերքելով այն կեղծիքը, ըստ որի իբր Հայաստանի կառավարությունը իր համաձայնությունն էր տվել Ղարաբաղը Ադրբեջանի գլխավոր նահանգապետի կողմից կառավարելու մասին։ «Հայկական կառավարությունը,—շեշտվում էր հաղորդագրության մեջ,—կատեգորիկ կերպով հայտարարում է, որ ինքը ոչ ոքի երբեք և ոչ մի պարագայում իր համաձայնությունը չի տվել այդ բանին։ Ընդհակառակը, հայկական կառավարությունը միշտ հայկական Ղարաբաղը համարել և համարում է Հայաստանի անբաժան մասը։ Այդ մասին նա բազմիցս հաղորդել է անգլիական հրամանատարությանը և Ադրբեջանի կառավարությանը»[9]։ Մեծամամանակ օգոստոսի վերջին կառավարությունը հատուկ հուշագրով դիմում է Փարիզի հաշտության կոնֆերանսի նախագահությանը՝ պահանջելով Ղարաբաղն ու Զանգեզուրը թողնել Հայաստանի կազմում։

Անգլիական գործիչների և մանավանդ Թոմսոնի կողմնակալ դիրքը նույնիսկ առաջ էր բերել Հայաստանում իրենց դաշնակից Ֆրանսիայի ներկայացուցչի դժգոհությունը, որը 1919 թ. մայիսին Հայաստանում Ադրբեջանի ներկայացուցիչ Թեկինսկուն հայտնում է, թե 1918 թ. նոյեմբերին Անդրկովկասում ֆրանսիացիները Ադրբեջանի հետ կվարվեին այլ կերպ, քան վարվել են անգլիացիները[10]։

Թոմսոնը փարիսեցիական հորդորներով, ժամանակավոր միջոցառման անվան տակ, բացահայտ ադրբեջանամետ վարքագիծ էր դրսևորում։ Այսօր էլ Արևմուտքը իր տնտեսական և քաղաքական շահախնդրությունների իրականացումը տարածաշրջանում կառուցում է ի վնաս հայկական կողմի։ Թոմսոնի և մյուսների հակահայկական քաղաքականության բացահայտումը կատարված է Հայաստանի Հանրապետության արտգործնախարարության 1919 թ. սեպտեմբերի գաղտնի մի իրազեկման մեջ, ըստ այդ փաստաթղթի Փարիզում Հայաստանի պատվիրակությունը պարզել էր, որ 1) Ղարաբաղի և հարակից հայրերում Թոմսոնը, նրա գործակիցներն ու հաջորդները գործել են Անգլիայի արտաքին և ռազմական նախարարությունների գիտությամբ և համաձայնությամբ, 2) նրանց զեկույցները միշտ էլ եղել են ի վնաս հայերի, 3) Անգլիան ամենուրեք, ինչպես և Կովկասում վարում է մուսուլմանական քաղաքականություն և 4) անգլիացիները համառորեն ձգտում են Ղարաբաղը հանձնել Ադրբեջանին[11]։

Ղարաբաղյան խնդրում Անգլիայի բացահայտ հակահայկական քաղաքականությունը դրսևորվեց 1919 թ. դեկտեմբերի 2-ին Թոմսոնի կանխարգելիչ կարգադրության մեջ, որով նա կանգնեցրեց Անդրանիկի հաղթական երթը դեպի Շուշի։ Այս խնդրում վնասակար դեր խաղաց նաև Վատոնդայի կառավարիչ Սոկրատ բեկ Մելիք-Շահնազարյանը, որին անհեռատեսորեն ունկնդրելով՝ Անդրանիկը 10 օրով հետաձգեց Շուշի դրավումը։ Վերջինից խաբված Անդրանիկը հետագայում պետք է հայտարարեր՝ այդ ամենում մեղավորը այդ սրիկա Սոկրատ բեկն էր, այլապես ես վաղուց մտած կլինեի Շուշի։

Դժվար չէ փաստարկել, որ արևմտյան տերությունները այսօր քաղաքական նույն ուղեծիրն են բռնել Ղարաբաղյան խնդրում՝ ոտնահարելով ազգերի ինքնորոշման իրավունքը և կառչելով տարածքների անխախտելիու-

8 Նույն տեղը, էջ 180։

9 Նույն տեղը, էջ 199—200։

10 Նույն տեղը, էջ 211—212։

11 Նույն տեղը, էջ 341—342։

թյան» սկզբունքից։ Բայց երբ իրենց ձեռնտու է, առանց քաշվելու խախտում են այդ սկզբունքը։ Այլ կերպ չես բացատրի, օրինակ, նրանց կողմից Խորվաթիայի, Բոսնիայի և Սլովենիայի անկախության հապշտապ ճանաչումը։ Ինչո՞ւ։ Որովհետև այդ էր կամենում «ամամենդականների պաշտպան» Թուրքիան, որին արևմտյան ոչ մի տերություն չի ուզում նեղացնել։ Դեռ ավելին, թույլ տվեցին, որ Թուրքիան 20-րդ դարի երկրորդ կեսին թուրքսելջուկյան ոճով հաշվեհարդար տեսնի Կիպրոսի հետ։

Ոտնահարելով սահմանված պարտավորությունները, ադրբեջանական դինված ուժերը 1920 թ. մարտի 22—23-ին մտան Շուշի և այն վերածեցին մոխրակույտի։ Չնայած հանրապետության ծանր վիճակին, Հայաստանի կառավարությունը Դրոյի և Նժդեհի գլխավորությամբ լեռնային Ղարաբաղ ուղարկեց զորքեր, որոնք հարկադրեցին թշնամուն փախուստի դիմել։

Սակայն Ադրբեջանի խորհրդայնացմամբ (1920 թ. ապրելի 28) հիմնովին նոր վիճակ առաջացավ ղարաբաղյան հարցում։ Հայաստանի կառավարությունը այս անգամ գործ ուներ 11-րդ Կարմիր բանակի և հապշտապ «հեղափոխականի» ղդեստ հագած և խորհրդայնացած երեկվա մուսավաթական ուժերի հետ։ Հայաստանի ղեկավարությունը միայն մի քանի ամիս հետո, 1920 թ. նոյեմբերի վերջին—դեկտեմբերի սկզբին, պիտի դիմեր նույն քայլին՝ ենթարկվելով ժամանակի պահանջի թելադրանքին, համաձայնվեր Հայաստանի խորհրդայնացմանը։ Բայց ինչպես մեջտ, հայերս բավականին ուշացել էինք։

Մենք այստեղ հնարավորություն չունենք կանգ առնելու 1920 թ. մայիս—նոյեմբեր ամիսներին Հայաստանի կառավարության կողմից Արցախի համար մղված պայքարի պատմության վրա։ Միայն նշենք, որ ընկնելով Կարմիր բանակի ուժերի և քեմալական դավթիչների հարվածների տակ, Հայաստանը կորցրեց ոչ միայն լեռնային Ղարաբաղը, այլև իր անկախությունը։ Եվ խորհրդային Հայաստանը առնվազն 70 հազ. քկ-ի փոխարեն ստացավ ընդամենը 29 հազ. քկ տարածք։

Հայաստանի առաջին հանրապետության վերջին վարչապետ Սիմոն Վրացյանը 1963 թ., 45 տարի անց, Բեյրութում Ռուբեն Զարյանի հետ ունեցած հանդիպման ժամանակ սիտի արտասաներ մեղանչանքի հետևյալ խոսքերը.

«Մենք պետք է ավելի խոհեմ լինեինք, ավելի շրջահայաց, պետք է ասքայլն (խորհրդայնացումը—Վ. Մ.) երբ ըլլայինք մայիսյան ընդվզումի օրերին, Հայաստանը հանձնած ըլլայինք ձեզ, պոլշևիկներուդ։ Հայաստանի տարածքը սավելի ընդարձակ կըլլար՝ Ղարս, Արտահան, Իգդիր... է՞հ, ինչ ըսեմ, ինչպես արդարանամ»[12]։

Մեզ մնում է վկայակոչել հետևյալ իրողությունը. իսկապես դառն ու պաժան հետևանքներ՝ են թողնում պատմական օբյեկտիվ գործոնները, եթե դրանց հետ ուշացումով են հաշվի նստում, երբ ժողովրդի գլխավորները կորցնում են իրատեսության զգացումը և քաղաքական ճշգրիտ հաշվարկը։

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ И АРЦАХСКИЙ ВОПРОС В 1918—1920 ГГ.

В. А. МИКАЕЛЯН, академик НАН РА

Резюме

В 1918—1920 гг. правительству Армянской республики приходилось вести упорную борьбу против агрессивных устремлений муса-

12 Հայաստանի Հանրապետություն, 1993, 24. XI։

ватистского правительства, стремившегося при поддержке турецких, затем и английских сил захватить Нагорный Карабах и включить его в состав Азербайджана. Историю борьбы за Нагорный Карабах в эти годы можно условно разделить на три этапа: 1/ май-октябрь 1918 г. (период турецкого нашествия в Закавказье); 2/ ноябрь 1918 г.—май 1920 г. (период пребывания в Закавказье союзных миссий и британских вооруженных сил); 3/ май-ноябрь 1920 г. (период советизации Азербайджана, затем и Армении). Борьба за сохранение Нагорного Карабаха в составе Армении на каждом из этих этапов имела свои отличительные особенности, обусловленные политическими событиями данного промежутка времени.